# ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԵՔ-ԳՀ ԱՊՁԲ-21/123»

ք. Երևան «18» «հունիսի» 2021թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է.Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև` Գնորդ), մի կողմից, և Ա/Ձ Հրաչիկ Քանանյանը (այսուհետև` Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ` պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով`Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ` ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի`**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի` պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք`

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն` իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա`

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ`

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք` պայմանագրով նախատեսվածի փոխարեն` պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է`**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու
դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ
տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն
ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ
վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու
մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն
բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը
պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին
հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,
ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,
ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար
իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն
խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս
խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,
ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ)
2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝
պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել
ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով,
լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝
պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել
այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն
իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով
նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին
հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է
ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց
սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **22258000 (քսաներկու միլիոն երկու հարյուր
հիսունութ հազար)** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն
ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ
թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և
ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել
ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝
դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական
միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝
պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և
ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում
վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն
իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև
տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի
համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված` ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ` լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ` մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի **0.1 (զրո ամբողջ մեկ) տոկոսի չափով:**

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է **տուգանք**` **պայմանագրի գնի 1(մեկ) տոկոսի** չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է

անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը
կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի
իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ
դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության
միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք
անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե
արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից
յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ
պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է
մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ
պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և
կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի
կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման
նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության
արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման
գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ
փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից
ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Յայաստանի Յանրապետության
օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն
լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը
հայտնի լինելու դեպքում գնումների մասին Յայաստանի Յանրապետության
օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ
որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար
առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է
Յայաստանի Յանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով
Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:
8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Յայաստանի
Յանրապետության դատարաններում:
8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն
Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը
կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:
Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ
պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում
կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների
կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման
յուրաքանչյուր դեպք սահմանում է Յայաստանի Յանրապետության կառավարությունը:
8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու
միջոցով.
1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների
չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.
8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ
ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ
Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի
առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման
համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում
սույն կետով սահմանված դեպքում ապրանքի
մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկանգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց
ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:
8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ)
օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած
վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝
ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և
դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և
չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների
և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները
կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող
նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:
8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի
չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ
համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Յայաստանի Յանրապետության օրենսդրությամբ
սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական
հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանքաղաքի **Շենգավիթ** վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | ՀՐԱՉԻԿ ՔԱՆԱՆՅԱՆ ԱՁ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ք. Երևան, Խանջյան 31 Ա |
| Կենտրոնական գանձապետարան | Հայէկոնոմբանկ ԲԲԸ |
| ՀՀ 900022750500 | Հ/Հ 163048015511 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 40057826 |
| Է.Կիրակոսյան --------------------------- | Հ. Քանանյան --------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ. |

Հավելված N 1
« » «հունիսի» 2021 թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/123 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ | ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | Չ/Մ | միավորի գինը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | կատարման հասցեն | կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մանկական խաղեր | | Երևանի Շենգավիթ վարչական շրջանի կարիքների համար պետք է ձեռք բերվեն և բակային տարածքներում տեղադրվեն 14 հատ մանկական խաղասարքեր:<br>Մանկական խաղասարքերն պետք է մատուցվեն նախատեսված ծավալներին համապատասխան:<br>Պահանջվող մանկական խաղասարքերն պետք է լինեն համաձայն կից ներկայացվող լուսանկարի ներկայացված տեսակի, բնութագրի, չափերի՝ կից ներկայացվում է լուսանկարները:<br>Պահանջվող մանկական խաղասարքերն պետք է լինեն չօգտագործված:<br>Օգտագործվող բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին, ինչպես նաև ապրանքների որակավորման և պարամետրային ցուցանիշներին:<br>Պահանջվող մանկական խաղասարքերը պետք է տեղափոխվեն և տեղադրվեն Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի կողմից առաջարկվող տարածքում: | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մանկական խաղեր 1 | 37531200/16 | քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ՝ **320*150*250** | հատ | 775000 | 775000 | 1 | ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան | *Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր հետո 01.09.2021թ.* |
| 2 | Մանկական խաղեր 2 | 37531200/17 | քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ՝ **720*220*300** | հատ | 1560000 | 1560000 | 1 | ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան | *Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր հետո 01.09.2021թ.* |
| 3 | Մանկական խաղեր 3 | 37531200/18 | քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ՝ **490*210*250** | հատ | 1248000 | 1248000 | 1 | ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան | *Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր հետո 01.09.2021թ.* |
| 4 | Մանկական խաղեր 4 | 37531200/19 | քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ՝ **240*265*250** | հատ | 895000 | 895000 | 1 | ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան | *Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր հետո 01.09.2021թ.* |
| 5 | Մանկական խաղեր 5 | 37531200/20 | քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ՝ **410*215*250** | հատ | 1140000 | 1140000 | 1 | ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան | *Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր հետո 01.09.2021թ.* |
| 6 | Մանկական խաղեր 6 | 37531200/21 | քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ՝ **495*210*280** | հատ | 1180000 | 1180000 | 1 | ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան | *Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր հետո 01.09.2021թ.* |
| 7 | Մանկական խաղեր 7 | 37531200/22 | քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ՝ **495*220*250** | հատ | 1260000 | 1260000 | 1 | ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան | *Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր հետո 01.09.2021թ.* |
| 8 | Մանկական խաղեր 8 | 37531200/23 | քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ՝ **640*450*260** | հատ | 2160000 | 2160000 | 1 | ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան | *Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր հետո 01.09.2021թ.* |
| 9 | Մանկական խաղեր 9 | 37531200/24 | քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ՝ **630*390*260** | հատ | 1650000 | 1650000 | 1 | ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան | *Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր հետո 01.09.2021թ.* |
| 10 | Մանկական խաղեր 10 | 37531200/25 | քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ՝ **640*320*260** | հատ | 1940000 | 1940000 | 1 | ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան | *Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր հետո 01.09.2021թ.* |
| 11 | Մանկական խաղեր 11 | 37531200/26 | քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ՝ **350*230*270** | հատ | 1050000 | 1050000 | 1 | ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան | *Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր հետո 01.09.2021թ.* |
| 12 | Մանկական խաղեր 12 | 37531200/27 | քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ՝ **710*340*280** | հատ | 1990000 | 1990000 | 1 | ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան | *Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր հետո 01.09.2021թ.* |
| 13 | Մանկական խաղեր 13 | 37531200/28 | քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ՝ **870*440*280** | հատ | 2460000 | 2460000 | 1 | ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան | *Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր հետո 01.09.2021թ.* |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | Մանկական խաղեր 14 | 37531200/29 | քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ՝ **660*520*280** | հատ | 2950000 | 2950000 | 1 | ք. Երևան Շենգավիթ վարչական շրջան | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր հետո 01.09.2021թ. |
| | Ընդհամենը | | | | | 22258000 | 14 | | |

*Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն նակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվել ու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնել ու օրվանից սկսած:*

| | Մանկական խաղերի նկարագիրը / Описание детских игр: | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մոդել/ **Модель** | Նկար / **Картина:** | Նկարագիր / **Описание:** | Չափսեր / **Размеры:** | քանակ / **количество** / | Գումար / **Сумма** |
| **JQ-0618143A** |  | **LLDPE + 5 * 5** քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ / **Труба из оцинкованной стали квадратного сечения** | **320*150*250** | **1** | 775000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **JQ-0618144C** |  | **LLDPE + 5 * 5** քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ / **Труба из оцинкованной стали квадратного сечения** | **720*220*300** | **1** | 1560000 |
| **JQ-0618146B** |  | **LLDPE + 5 * 5** քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ / **Труба из оцинкованной стали квадратного сечения** | **490*210*250** | **1** | 1248000 |
| **JQ-0618155B** |  | **LLDPE + 5 * 5** քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ / **Труба из оцинкованной стали квадратного сечения** | **240*265*250** | **1** | 895000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **JQ-0618158A** | <br> | **LLDPE + 5 * 5** քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ / **Труба из оцинкованной стали квадратного сечения** | **410*215*250** | **1** | 1140000 |
| **JQ-06185510** |  | **LLDPE + 5 * 5** քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ / **Труба из оцинкованной стали квадратного сечения** | **495*210*280** | **1** | 1180000 |
| **JQ-06185517** |  | **LLDPE + 5 * 5** քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ / **Труба из оцинкованной стали квадратного сечения** | **495*220*250** | **1** | 1260000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **JQ-JX2055008** |  | **LLDPE + 5 * 5** քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ / **Труба из оцинкованной стали квадратного сечения** | **640*450*260** | **1** | 2160000 |
| **JQ- JX2055018** |  | **LLDPE + 5 * 5** քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ / **Труба из оцинкованной стали квадратного сечения** | **630*390*260** | **1** | 1650000 |
| **JQ-JX2055035** |  | **LLDPE + 5 * 5** քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ / **Труба из оцинкованной стали квадратного сечения** | **640*320*260** | **1** | 1940000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| JQ-RB207028B |  | LLDPE + 5 * 5 քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ / Труба из оцинкованной стали квадратного сечения | 350*230*270 | 1 | 1050000 |
| JQ-RB2055022 |  | LLDPE + 5 * 5 քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ / Труба из оцинкованной стали квадратного сечения | 710*340*280 | 1 | 1990000 |
| JQ-RB2055025 |  | LLDPE + 5 * 5 քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ / Труба из оцинкованной стали квадратного сечения | 870*440*280 | 1 | 2460000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| JQ-251814002 Լիստ 2-ից |  | LLDPE + 5 * 5 քառակուսի ցինկապատ պողպատե խողովակ / **Труба из оцинкованной стали квадратного сечения** | 660*520*280 | | 1 | 2950000 |
| | Ընդամենը Մանկական խաղ | 14 | հատ | | 14 | 22258000 |

**ԳՆՈՐԴ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900022750500
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՐԱՉԻԿ ՔԱՆԱՆՅԱՆ ԱՁ
ք. Երևան, Խանջյան 31 Ա
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163048015511
ՀՎՀՀ 40057826

Հ. Քանանյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«      » «հունիսի» 2021 թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/123 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1-14 | Մանկական խաղեր | .... | .... | .... | .... | .... | .... | 12909640 | 12909640 | 12909640 | 22258000 | 22258000 | 22258000 | 22258000 |

**ԳՆՈՐԴ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900022750500
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան ---------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՐԱՉԻԿ ՔԱՆԱՆՅԱՆ ԱՁ
ք. Երևան, Խանջյան 31 Ա
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163048015511
ՀՎՀՀ 40057826

Հ. Քանանյան ---------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«  » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ
______________________ —
______________________ —
գտնվելու վայրը __________ ____
հհ ______________________ —
հվհհ ______________________ —

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «   » 20  թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________________________

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրիկողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | ճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20__ թ. ________________-ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________
ազգանուն, անուն

________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________
ազգանուն, անուն

________________
ստորագրություն

Հավելված 5.1
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/123* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «18 »հունիսի 2021 թ.**

<<Հրաչիկ Քանանյան>> Ա/Ձ-ի դեմս Ընկերության տնօրեն Հ.Քանանյանի Ն/Ք 001355676 , տրվել է՝ 25.12.2012թ.-ին , 010-ի կողմից որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

3. Համաձայնության առարկան

1.2 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/127-1* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

4. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

### 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները`

<<Հրաչիկ Քանանյան>> Ա/Ձ

ք. Երևան , Խանջյան 31Ա

<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ

Հ/Հ 163048015511

ՀՎՀՀ 40057826

Հրաչիկ Քանանյան ______________

Կ.Տ

18/հունիսի/2021թ.

1.

# ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը` "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն `<<Հրաչիկ Քանանյան>> Ա/Ձ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)` Հայէկոնոմբանկ ԲԲԸ

6. Վճարողի հաշվի համարը` 163048015511

7. Վճարողի ՀՎՀՀ` 40057826

8. Վճարողի ՀԾՀ`

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ` Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ` 02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)` Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)` 2225800 (երկու միլիոն երկու հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր)

15. Ակցեպտավորված գումարը` (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)` ՀՀ դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը` *( պայմանագրի ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը`(Փաստաթղթերի անվանումը, այդ թվում` տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)` ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/123

19. Վճարման պայմանները` <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը` --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները

/____________________/

/____________________/

22.բ.

Կ.Տ.

21.ա. Վճարողի ստորագրությունները`

/____________________/ /____________________/

21.բ.

Կ.Տ.

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն

/____________________/

/ստորագրություն/

24.բ.

Կ.Տ.

24.գ "___" ___ 20___ թ.

23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն

/____________________/

/ստորագրություն/

23.բ.

Կ.Տ.

23.գ.Կատարման ամսաթիվը` "___" ___ 20___թ.

Հավելված 4.2
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/123* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան «18 »հունիսի 2021 թ.**

<<Հրաչիկ Քանանյան>> Ա/Ձ-ի դեմս Ընկերության տնօրեն Հ.Քանանյանի Ն/Ք 001355676 , տրվել է՝ 25.12.2012թ.-ին , 010-ի կողմից որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

5. Համաձայնության առարկան

1.3 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/127-1* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.11 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

6. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

### 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները`

<<Հրաչիկ Քանանյան>> Ա/Ձ

ք. Երևան , Խանջյան 31Ա

<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ

Կ.Տ

18/հունիսի/2021թ.

1.

## ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ <<Հրաչիկ Քանանյան>> Ա/Ձ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 163048015511

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 40057826

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հ$_2$.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 3338700 (երեք միլիոն երեք հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/123

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>22.բ.<br>Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>21.բ.<br>Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.Տ.<br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>23.բ. Կ.Տ.<br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

ք. Երևան

17.06.2021 թ.

# ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

«Հրաչիկ Քանանյան» Ա/Ձ-ն /ՀՎՀՀ՝ 40057826 , ՆՔ 001355676, տրվ. է 25.12.2012թ., 010-ի կողմից/, լիազորում է Ընկերության աշխատակից Քնարիկ Քանանյանին (ՆՔ 008515967, տրվ. 29.09.2016 թ., 011-ի կողմից) հանդես գալ Երևանի քաղաքապետարանում ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/123 ծածկագրով գնանշման հարցման հրավերի շրջանակներում հանձնել պայմանագրի 2 օրինակները , որակավորման և պայմանագրի ապահովումները:

Լիազորագիրը ուժի մեջ է մինչև 30 հունիսի 2021 թ.

Լիազորված անձի ստորագրությունը՝ ____________________

«Հրաչիկ Քանանյան» Ա/Ձ Անհատ Ձեռնարկատեր Հ.Քանանյան ____________________